

տարիմ' համարատու կտակակատարքն
 Նորու մեր ձեռքն հասաւ 1872
 ին Տիֆլիսի մէջ տպագրուած մրտեա
 րակ, որ կը պարունակէ հանգուցեալ
 Յովսէփ Էֆէնդի սնցի համառօտ կէն
 ստգրութիւնն պատկերով հանդերձ,
 նորա կտակագիրն և կտակակատարաց
 10-ամեայ մանրամասն հաշուեցոյցն,
 Սոյն տետրակն յայտնապէս ցոյց կը
 տայ թէ հանգուցելոյն բարեխիղճ կը
 տակակատարքն Պ Պ. Գրիգոր Իզմիր
 եանց և Աւետիք Սվէշնիկեանց ինչ
 գովելի աշխատութեամբ ծառայած են
 հանգուցեալ կտակարարի կենդանի
 նպատակին, և թէ ինչ ինքնայորդոր
 համարատուութեամբ հրատարակած
 են իրենց հաշուեցոյցն ՚ի գիտութիւն
 Աղլին: Փափագելի էր որ սոցա գեղե
 ցիկ արարքն օրինակ լինէր ամեն կը
 տակակատարաց: Մէք շատ կտագրեր
 կորդացած ենք, բայց գրեթէ առա
 ջինն է որ կտակակատարաց դործա
 նութեան հաշուեցոյց կը տեսնեմք:
 Մէք այնպէս գիտեմք, որ ամէն
 ազգային կտակակատարք պատասխա
 նատուութի պարտաւորութիւն ու
 թւինն Աղլին առջև, սակայն շատ ան
 գամ ոչ կտակակատարք ինքնին գգա
 լով և ոչ Աղլային վարչութեանց կող
 մէն պահանջու մն լինելով այն մեծ
 պարտաւորութիւնն գողցես ՚ի շարս
 պարտաւորութեանց համարուած չէ,
 ուստի և շատ կտակներ, ինչպէս ասա
 ցինք, կամ ապարդիւն մնացած են և
 կամ ՚ի կորուստ մատնուած: Կեցցեն
 ուրեմն հայրենասէր Իզմիրեան և Սվէշ
 նիկեան, որք իրենց արգիւնաւոր հա
 մարատուութեամբ՝ կտակակատարու
 թեան գեղեցիկ տիպար կը հանգիսա
 նան Աղլին մէջ:

ԺԱՄԱՆԱԿԱՆ ԲՆԱԿՆԵՐ

—Բէթղէ հեմի վարագուրաց ինչպէ
 րն տակաւին նոյն դրութեան մէջ է:
 Կսխուած վարագոյցն նսինականին
 չափէն շատ մեծ լինելուն և միանգա
 մայն պրօպակտն նշաններ կրելուն հա
 մար՝ բողոքոյ տակ է մեր և Յունաց
 միաբանութեանց կողմէն: Լատինք կը
 յամառին և Տէրութեան կողմէն տա
 կաւին վերջնական հրաման չեկու ներ
 կաց վարագուրի բարձման և նոր, շա
 փուոր և օտարասի նշաններ չը կրող
 վարագուրիմը կախման համար: Յայտնի
 է որ մեր պատկերներէն մէկն տակա
 ւին կախուած չէ: Վասն զի մեր պատ
 կերի տեղն Լատինք պատկեր կախած
 են, որ բողոքովին իրաւանց բռնաբա
 րութիւն է: Այս խնդիրն եւս վարա
 գուրի խնդրոյն յարակից է և աւակա
 ւին կը շարունակի: Թէպէտ և տե
 ղոցս Պուսակաւն առաջարկեց ուրիշ
 տեղէ պատկեր մի կախել, բայց մեր
 պատկերի տեղն յախշտակուած լինե
 լուն համար՝ առաջարկութիւնն մեր
 ժուեցաւ:

—Ի՛նչ ամսոյս, որ էր ՚ի 6՛ն Ապրի
 լի ըստ նոր տումարի, Լատինք Ծաղ
 կաղարդի հանդէս կատարելու ժամա
 նակ ՚ի Բէթղէ հեմ առիթ տուած են
 մեծ խոսիութեան: Հանդիսաւոր թա
 վարն չըջեցուցած են այնպիսի տեղէ,
 որոյ իրաւունքն Հայոց և Յունաց մի
 այն կը պատկանի: Յունաց լուսարա
 րն ընդ տաաջ ընելով կամեցած է ար
 գելուլ, բաց թափօրականք վերար
 կուներու տակ բիրեր և գրպանաց
 մէջ քարեր ունենալով յարձակած են
 Յոյն լուսարարի վերայ, աղաղակն
 մեծնալով Յունաց վանքէն ուրիշ մի
 արաններ ևս յօգնութիւն վազած են,
 և ընդգիմադրութեան ստասիկ միջոցին
 թափօրականներէն մին, Յոյնին ձե

Տեղա համար, կամեցած է քշոյն մեր լուսարարի ձեռքէն կորզել, և նա դէմ դնելով որպէս զի մեր պատարագն չխափանեն, ձեռքն վիրաւորուած է, և թէ պէտք քշոյն տուած չէ, բայց թափօրա կանն մեր սեղանի վրայէն մեծ խաչ մի յափշտակելով նովաւ վիրաւորած է Յոյն լուսարարի գլուխն, որով և կը տոր կտոր եղած է մեր խաչն: Սոյն ամօթալի գանակոծութեան միջոցին Տէրութեան յիմնապետ մի զինուոր ներով հանդերձ վերայ կը հասնի մի ջամտելու և խաղաղացնելու համար, սակայն նորա բթամասն եւս կը կտորուի լատինական հարուածոց տակ: Այս բարբարոսական անցքն կ'անցնի մեր պատարագի ժամանակ, և թէ ինչպէս կը կատարուի նոյն պատարագըն, կը թողումք որ այլք իմաստասիրեն:

Երբ այսպիսի տեսարաններ կը ներկայանան Սուրբ Տեղեաց մէջ, որք խաղաղութեան սրբավայրներ եղած են ՚ի սկզբան քրիստոնէութեան. երբ այսպիսի անտի-քրիստոնէական խռովութիւնք կը յուզուին այն տեղեաց մէջ, ուր աղօթք և փառաբանութիւնք կը կատարուին, սոսկմամբ կը պաշարուի զգայուն քրիստոնեայն, և ցաւօք սրտի կըստիպուի ասել, որ տակաւին մոլեռանդութիւնն մեծ

գեր կը խաղայ քրիստոնէական փրկարար և երջանկարար կրօնին անուամբ, որոյ հիմն է սէրն, և շինուածն խաղաղութիւն, արդարութիւն, ճշմարտութիւն և սրբութիւն:

- Ի 26 ն ամսոյս լուեցաւ թէ՛ երկու Ռուսաղբի ուխտաւոր կիներ սաստիկ արբենալով և միմեանց հետ կը ուռի բռնուելով մէկն փոքրիկ դաշոյնով մտրթած է զմիւսն և շիւպատաւարանի կողմէն բռնուելով բանտարկուած է: Ահա հետեւեալնք լիսի ուխտաւորութեան:

- Ներկայ տարւոյս մէջ իոիտ բաղձաթիւ են Երուսաղեմի ուխտաւորներն, որոց մէջ զվսաւոր տեղ կը գըրաւեն Եւրոպացիք, որք թէեւ երկար չեն մնար այս տեղ, բայց անընդհատ կ'երթեւեկեն մեծամեծ խումբերով:

ՎՐԻՊԱԿՔ

Փետրվար ամսոյ Սիօնի մէջ եղած Կիսրոսի հաշուեկշռոյն արկղի վիճաւ կին ելից կողմը չորրորդ տողը 57 3/4 ի տեղ՝ 573 3/4 ըլլալու է:

Փետրվար ամսոյ Սիօնի 39 երես 22 տողին մէջ յերեւան բառը յերեւան պիտի լինի:

Ս. Աթուոյս Միաբան Չարարիս վարդապետն Լաթարիայէն կը գրէ. «Յայտնի է Հալեպցի Պարոնեան անուանարկ Գեորգ վարդապետի կուսակրօն ուխտադրութիւն արգրեաւոր ամուսնութիւնն, և այնուհետե կ'ամթող անվաւեր քահանայադրութեամբ Եզրուպիէ՛ գիւղն քանի տարի է՚ի վեր արբին: Այս պատճառաւ Կիլիկիոյ Սրբազնազոյն Մկրտիչ կաթողիկոսն քանի մի անգամ քաղցրութեամբ կոչուելով ինքն զինքն պաշտպանելու համար ազգութացութեամբ պիմած է տեղոյս Յոյն եպիսկոպոսի իրաւասութեան, օտար աղօցոց աւճիւ Աղղերնուս պատկառելի պատիւն և հաստն ու կրօնքն արատաւորելով կրկնակրտութեամբ և վերստին կարգ ընդունելով եպիսկոպոսն, որ Յունաց եկեղեցւոյն մէջ բոլոր յունազգի ժողովրդեան նեւթայութեամբ յայտնի համայնակ կը ծանուցանէ թէ՛ Հայազգի Գեորգ վարդապետն ուզելով յունական ուղղափառ Եկեղեցւոյ որդեգրել, վասնորոյ մենք զինքն, բոս պահանջման անցեալ շարսթ օրն: 24 Փետրվարի Մար Ճրճես եկեղեցին կրկնակրտութեամբ դրոշմեցինք: այսօր ալ կուսակրօն արժեանատրիս կը ձեռնադրեմք զինքն Եզրուպիէ գիւղն Հայոց աղղին յունացածներուն վրայ ու և այլն և այլն:

Ար ցաւիմք որ Աւսթօյ լրագրի խօսքն և Յունաց Եկեղեցւոյ գործքն ամենեւին իրարու չեն հաճոյատաւաններ: Այս գեպքն մեր աղբային լրագրաց ուշադրութեամբ կը յանձնեմք. իսկ մեր ուրախ ենք, որ կրկնակրտութեամբ անպիստաններն մեր Աղղին կը հեռանան: